նեցուն ազատութիւն և բնակութիւն. այսինքն տունս և տեղս։ Այլ և եկեղեցի ետ շինել գեղեցիկ և վայելուչ Հայ ազգին անուան վրայ, զի հաստատեսցին անդ յաղագս յաղգս և որդեց որդիս։ Այսքան առ այս. և Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան. ամէն։

1586. Թվ. ՌԼԵ. Դեկտ. ԺԵ օրն. Հրամանաւն ամենակալին Աստուծոյ բարեպաշտ թագաւորն մեր Ստեփանոս՝ զոր Պաթօրիյ որջորջիւր, առ Աստուած փոխեցաւ. և մեծ սուգ և տարակուս եթող Նեմիչի աշխարհիս այս. քանզի էր աստուածապաշտ և ուղղափառ Աստուծոյ օրինաց. այլ և էր շնորհօքն Աստուծոյ զարդարեալ ամենայն առաքինութեամբ և կարողութեամբ. զի էր արդարադատ և իրաւարար, հեզ և իմաստուն և հանճարաշատ, և հսկայազօր, քաջասիրտ պատերազմաց և հմուտ կռվոյ. զոր քաջութիւն նորա ընդ ամենայն աշխարհն համբաւեալ էր. վասն որոյ ամենայն ոք որք հակառակ կային նմա՝ լքան ձեռքն նոցա, և ահ պատեաց, դողումն կալաւ զնոսա զամենեսեան։ Զոր և փոքր ի շատէ կայ գրեալ ի այսմ թղթիս, թէ որպէս հնազանդեցոյց զՄոսքովի իշխանն, այսինքն զքնազ։ Եւ Քրիստոսի մարդասիրին փառք՝ յաղագս այսորիկ. ամէն։

1587. Թվ. ՌԼԶ. Մարտի ԺԲ. Մեծ հրաշք եղաւ, զի ոչ ոք ի մարդկանէ լուեալ էր կամ տեսեալ. և այն օրն Լաթինացոց ազգն զիւրեանց խոտորեալ զպատիկն առնէին. և արդ երկու օր և երկու գիշեր անչափ ձիւն իջաւ հողմախառն, որ զդրունս ծածկեաց, և ոչ ոք ի մարդկանէ կարէր ի տանէ կամ ի դրանէ ի դուրսն ելանել. և այս մեծ և յայտնի ցասումն էր Աստուծոյ, վասն խոտոր զատիկ առնելոյ նոցա. զոր Աստուած վերջն ի բարին առնէ։

Դարձեալ ի սոյն ամին մեծ գետյարուց եղեւ ի Կամինիցս. զի տասն օր քաղքին դուռն չփակեցին, վասն զի ջուրն խապախի միջով կու ընթանայր. բազում պակասութիւն քաղաքացոց (եղեւ), զի չորս շաբաթ առաջ զատիկն առին քան զայլ քրիստոնեայս։

1588. Թվ. ՌԼԷ. Նստաւ ի թագաւորութիւն Զիկմունդ բարեպաշտ թագաւոր մեր. քանզի այս թագաւորն Զիկմունդ որդի էր Շվիդքիյ թագաւորին, և էր ինքն դեռ եւս կենդանի գոլով. և էր այս երկրին ծեր Զիկմունդ թագաւորին փեսայն. վասն որոյ կամէին զի այս երկրիս ժառանգութենէ լինէր թագաւոր։ Քանզի յորժամ վաղնանեցաւ քաջ և յաղթող բարեպաշտ թագաւորն Ստեփանոս՝ ասի կենաց յանանց կեանս, որպէս կայ գրեալ վերագոյն ի մէջ այսմ թղթի, մնաց աշխարհս առանց թագաւորութեան. վասն զի բարեպաշտ թագաւորն Ստեփանոս անորդի մեռաւ, և ոչ եթող ժառանգ թագաւորութեան. և վասն այս պատճառի՝ երկրի իշխանք տարակուսեցան և շփոթեցան, և մեծ տարակուս ընկաւ ի միջի նոցա. և բազում աղմուկ և խռովութիւն և արիւնհեղութիւն եղեւ. զի ոմանք իշխանաց և բազմու-